

ՀԱՐԿԱԴԻՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 10, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՀԱՅԱՍՏԱՆ. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՀԵՈՒՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ, ՓՈՒԼ II

Նախագծի համարը՝ L2860-ICB-1-10



-Երևան-
Փետրվար 2015թ.

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԶԲ	Ասիական Ձարգացման Բանկ
ՀԽ	Հանրային Խորհրդատվություն
ՀԿ	Հայաստանի կառավարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԶՏ	Հողի ձեռքբերում և տարաբնակեցում
ՀԶՏԾ	Հողի Ձեռքբերման և Տարաբնակեցման Ծրագիր
ՀԶՏՇ	Հողի Ձեռքբերման և Տարաբնակեցման Շրջանակ
ՀԶԿ	Հայջրնուկլոյուղի
ՁՏՊԿ	Ձրային տնտեսության պետական կոմիտե
ՁՄԿ	Ձրի մաքրման կայան
ՁևՁ	Ձրամատակարարում և Ձրահեռացում
ՏԻՄ	Տեղական Ինքնակառավարման մարմիններ
ՕԿԶ	Օրվա կարգավորման ջրամբար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
Ա Ծրագրի նախադրյալները.....	4
Բ Ծրագրի գործունեության շրջանակները	4
Գ Ենթաժրագիր X-ի նախագծային առանձնահատկությունները.....	4
Դ Հաշվետվության նպատակը և գործունեության շրջանակները.....	7
2. ՀՁՏ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ	7
3 ՀՁՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄ	7
4. ՀՁՏ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ.....	10
5 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	11

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա Ծրագրի նախադրյալները

1. Ջրամատակարարման և Ջրահեռացման (ՋևՋ) սեկտորի ծրագրի Փուլ I-ի հաջող իրականացումից հետո Հայաստանի կառավարությունը (ՀԿ) Ջրային տնտեսության պետական կոմիտեի (ՋՏՊԿ) միջոցով առաջարկել է Ասիական Ջարգացման Բանկին (ԱՋԲ) աջակցել նոր ծրագրի ֆինանսավորմանը: ԱՋԲ-ն համաձայնել է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարությանը տրամադրել 40 մլն. ԱՄՆ վարկ 10 ենթածրագրերի ՋևՋ համակարգերի վերականգնման և ընդլայնման, Հայջրնուղկոյուղու (ՀՋԿ)¹ աշխատանքի արդյունավետության և ֆինանսական կառավարման բարելավման նպատակով: Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր-լրացուցիչ ֆինանսավորում Փուլ II-ն ընդգրկում է 18 քաղաքների և 92 գյուղերի ջրամատակարարման համակարգերի վերանորոգում, փոխարինում և/կամ ընդլայնում: Նախատեսված է ներդրումներ կատարել 10 մարզերում՝ 10 ենթածրագրերի շրջանակներում: Վերաբնակեցման գործողությունների սույն հաշվետվությունը հիմնավորում է հողի ձեռքբերման և տարաբնակեցման խնդիրների բացակայությունն ենթածրագիր X-ում:

Բ Ծրագրի գործունեության շրջանակները

2. Ծրագրի նպատակն է. (ա) վերականգնել և արդիականացնել ջրամատակարարման ենթակառուցվածքները, (բ) բարելավել ջրամատակարարման ծառայությունների իրականացումը, և (գ) բարելավել ջրի կոմունալ սպասարկման կազմակերպության կառավարման և շահագործման արդյունավետությունը: Ենթածրագիր X-ի շրջանակներում ընդգրկված են ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքը և Արուճ, Պարտիզակ, Նոր Ամանոս, Արևուտ, Կանչ, Հակո, Սորիկ, Քարաբերդ գյուղերը:
3. Ծրագրի իրականացման արդյունքում, շահառու տնտեսություններին որակյալ խմելու ջուր մատակարարելով, (ա) կբարելավվի հասարակության առողջությունը, քանի որ կնվազի ջրի աղտոտման վտանգը և կբացառվի խմելու ջրում տարբեր հարուցիչների ներթափանցումը (բ) կավելանա ջրամատակարարման տևողությունը (գ) ջրի սպառումը կլինի ավելի արդյունավետ: Հետևաբար, ծրագրի բոլոր քաղաքներում և գյուղերում բնակիչների և տնտեսությունների կենսակերպը կբարելավվի:
4. Ծրագիրը կստեղծի անվտանգ, վստահելի ջրամատակարարում խողովակաշարերի միջոցով 110 համայնքների համար՝ 18 քաղաք և 92 գյուղ 10 մարզերում (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Տավուշ, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք և Վայոց Ձոր): Ծրագիրը կիրականացվի ենթածրագրերի միջոցով: Ենթածրագիր X-ի շահառուները Արագածոտն մարզում Թալին քաղաքն ու Արուճ, Պարտիզակ, Նոր Ամանոս, Արևուտ Կանչ, Հակո, Սորիկ և Քարաբերդ գյուղերն են՝ ընդհանուր առմամբ մոտ 11 412 շահառուներով:

Գ Ենթածրագիր X-ի նախագծային առանձնահատկությունները

5. Շահառու համայնքներում ջրամատակարարման համակարգը հիմնականում կառուցվել է 1960-70թթ.: Որոշ ջրագծեր և ջրաչափական հանգույցներ կառուցվել են 2009-10թթ. ԱՋԲ-ի

¹ ՀՋԿ-ն պետական առևտրային կազմակերպություն է, որը կառավարվում և շահագործվում է միջազգային ջրի կոմունալ սպասարկման կազմակերպության կողմից՝ համաձայն կառավարման պայմանագրի:

կողմից ֆինանսավորված ծրագրերի շրջանակներում: Արտաքին ջրամատակարարման համակարգերի և բաշխիչ մոտ 80%-ը վթարային վիճակում է:

6. Ենթածրագիր X-ում ընդգրկված Թալին քաղաքի ինչպես նաև Արուճ, Պարտիզակ, Նոր Ամանոս, Արևուտ, Կանչ, Յակո, Սորիկ և Քարաբերդ գյուղերի ջրամատակարարման համակարգի բարելավման առաջարկությունների հիմքում ընկած են հետևյալ մոտեցումները.
 - հոսակորուստների նվազեցում,
 - ջրի որակի բարձրացում,
 - ջրաքանակի հաշվառում, սպասարկման որակի բարձրացում,
 - ջրամատակարարման տևողության բարձրացում,
 - խմելու ջրի ռացիոնալ օգտագործում:
7. Ենթածրագրում ընդգրկված համայնքներում ջրամատակարարման վիճակը բարելավելու համար առաջարկվող միջոցառումները ընդգրկում են հետևյալ բնույթի աշխատանքները.
 - վերակառուցել և վերանորոգել ջրամատակարարման բաշխիչ ցանցերը, կարգավորող և ջրաչափական հանգույցները, մասնավոր տների, հասարակական օբյեկտների, համայնքային և հասարակական շենքերի մուտքագծերը,
 - արտաքին ջրատարների վերակառուցում Սորիկ, Յակո, Քարաբերդ, Արևուտ:
8. Ենթածրագրում ընդգրկված բնակավայրերի ջրահեռացման համակարգերի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ նշված համայնքները կոյուղացված են մասնակիորեն:
9. Հաշվի առնելով ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրում ընդգրկված բնակավայրերի թվաքանակը և դրան համապատասխան վարկային միջոցների սահմանափակությունը՝ բնակավայրերի լիարժեք բարելավման առաջնահերթ միջոցառումների ծրագրում ընդգրկվել են այն աշխատանքները, որոնք կբերեն առավել հրատապ խնդիրների լուծմանը: Ընտրվել են տեխնիկական և ֆինանսական առումով իրագործելի առաջարկությունները:
10. Ստորև ներկայացվում են Թալին քաղաքի ու Արուճ, Պարտիզակ, Նոր Ամանոս, Արևուտ Կանչ, Յակո, Սորիկ, Քարաբերդ գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման համար այն հիմնական չափանիշները, որոնք հիմք են հանդիսացել առաջնահերթ ներդրումների ծրագրի մշակման համար.
 - բնակավայրերի ընդգրկելիությունը ՀԶԿ-ի կազմում,
 - բաժանորդների կողմից վարձավճարների հավաքագրման մակարդակը և պատրաստականությունը,
 - բնակավայրի ջրամատակարարման առկա վիճակը և բարելավման հնարավորությունը,
 - համակարգի, այդ թվում նաև ջրաղբյուրների հզորությունը և ջրաապահովման հնարավորությունը,
 - համակարգի կառավարելիության մակարդակի բարձրացման հնարավորությունները,
 - համակարգի բոլոր տարիների տեխնիկական վիճակը և բարելավման կարիքները,
 - ջրի հաշվառման առկայությունը և համակարգի կիրառման կամ ներդրման հնարավորությունները,
 - անհատական տների մուտքագծերի կառուցման և ջրաչափի տեղադրման անհրաժեշտության ծավալները,
 - հոսակորուստների և շռայլումների կրճատման հնարավորություններն ու պահանջվող աշխատանքների ծավալները,
 - շահագործման ծախսերի կրճատման, կառավարման արդյունավետության հնարավորությունները:

Ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով ենթաձրագրի բնակավայրերում աշխատանքային նախագծով նախատեսված մանրամասն միջոցառումները տես ստերև՝ Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: Իրականացվող աշխատանքների ամփոփ նկարագիրն ըստ համայնքների

Աշխատանքներ	Չ/Ս	ք. Թալին	գ. Արուճ	գ. Պարտիզակ	գ. Նոր Ամանոս	գ. Արևուտ	գ. Կանչ	գ. Հակո	գ. Սողկ	գ. Քարաբերդ	Ընդամենը
Արտաքին ջրատարի վերակառուցում	գծմ	-	-	-	-	4000	-	1550	3660	2300	11510
ՕԿՁ-ների վերանորոգում	խմ	2500	-	-	-	-	-	-	100	-	2600
Քլորակայանի վերանորոգում	հատ	1	-	-	-	-	-	-	-	-	-
Քլորացման սարքերի տեղադրում	հատ	-	1	1	1	-	-	-	-	-	3
Ջրամատակարարման ներքին ցանցի վերակառուցում de50-de160 տրամագծի խողովակներով, փորձարկում, լվացում, ախտահանում	գծմ	19065	7850	3650	6450	970	2880	1550	1300	8320	51915
Անհատական տների մուտքագծերի կառուցում՝ ջրաչափական հորերի տեղադրմամբ	հատ	569	238	86	120	35	35	26	25	230	1364
Բազմաբնակարան շենքերի և հասարակական օբյեկտների մուտքագծերի փոխարինում	հատ	45	-	-	-	-	-	-	-	-	45
Ջրամատակարարման և հիդրանտային հորերի կառուցում, վերակառուցում	հատ	12	-	-	-	-	-	-	-	-	12
Փականային և թաղված փականային հանգույցների կառուցում	հատ	58	9	2	13	2	1	3	1	11	100

11. Վերը նշված բնակավայրերից՝ Թալին քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է Կարմրաշենի, Կենտաղբյուրի աղբյուրակապերից ինքնահոս համակարգի միջոցով: Աղբյուրակապերից տեղափոխվող ջրաքանակը վարակազերծվում է Թալինի ՕԿՁ-ների տարածքում գտնվող քլորակայանում: Թալին քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցը սպասարկվում է 2500մ³ ընդանուր ծավալով 4 ՕԿՁ-ների միջոցով: Արուճ, Պարտիզակ Նոր Ամանոս գյուղերի ջրամատակարարումն իրականացվում է Ոսկեթասի աղբյուրակապերից՝ ինքնահոս համակարգով: Աղբյուրակապերից տեղափոխվող ջրաքանակը վարակազերծվում է համայնքներում գործող ՕԿՁ-ների մեջ՝ պարկուճների միջոցով: Արևուտ Կանչ, Հակո, Սողկ ջրամատակարարման ներքին համակարգերն իրականացվում են գյուղերի տարբեր հատվածներում գտնվող փողոցային ծորակներով և ունեն փոխարինման կարիք:

Դ Հաշվետվության նպատակը և գործունեության շրջանակները

12. Տվյալ հաշվետվության նպատակն է վերանայել Ենթաժրագիր X-ի հողի ձեռքբերման և տարաբնակեցման (ՀՁՏ) ազդեցությունը՝ հիմնվելով աշխատանքային նախագծի վրա և առաջարկել այն մեղմացնող միջոցառումներ՝ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության համաձայն (2009): Սույն հաշվետվությունը կազմվել է նաև համաձայն Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր – լրացուցիչ ֆինանսավորման Տարաբնակեցման շրջանակի (2011):

2. ՀՁՏ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ

13. Ըստ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության դասակարգման՝ Ծրագիրը հարկադիր տարաբնակեցման ազդեցության տեսանկյունից համարվում է Բ կատեգորիայի (սահմանափակ ազդեցություն): Նախնական, այնուհետև աշխատանքային նախագիծը ցույց է տվել, որ վերականգնողական և շինարարական աշխատանքները բացառապես իրականացվելու են ՀՁԿ-ի կողմից սեփականություն համարվող տարածքներում, համայնքային հողերում, կամ քաղաքային/համայնքային ենթակառուցվածքին տրված իրավունքների շրջանակներում:

14. ՀՁԿ-ի Ծրագրի (Փուլ II) Հողի Ձեռքբերման և Տարաբնակեցման Շրջանակը (ՀՁՏԸ) մշակվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի և հաստատվել Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից ՀՀ Տարածքային Կառավարման Նախարարության վերահսկողության ներքո: Փաստաթուղթը վերաբերում է ծրագրի ՀՁՏ-ի ազդեցություններին՝ հիմք ընդունելով նախնական նախագիծը: ՀՁՏԸ-ն հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2012թ. մարտին: Փաստաթղթի մանրամասները, մեխանիզմները, ընթացակարգերը և փոխհատուցման վճարները պետք է կիրառվեն Հողի Ձեռքբերման և Տարաբնակեցման միջոցառումները ծրագրման և իրականացման ժամանակ: Տարաբնակեցման ծրագրի մեկ օրինակելի ձևանմուշ մշակվել է 2011թ. դեկտեմբերին, որպես ՀՁՏԾ-ի պատրաստման ուղեցույց հողի օտարման կամ տարաբնակեցման խնդիրների ծագման դեպքում: Տարաբնակեցման ծրագրի մեկ օրինակելի ձևանմուշ նույնպես հաստատվել է ՀՁԿ-ի կողմից և 2011թ. դեկտեմբերի 19-ին Ծրագրի ՀՁՏԸ-ի հետ միասին ներբեռնվել է ՀՁԿ-ի վեբ կայք²:

3 ՀՁՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂԱՑՈՒՄ

15. Աշխատանքային նախագծի հիմնական նախապայմաններից մեկը ՀՁՏ ազդեցության կանխարգելումն է, քանի որ ՀՁՏԸ-ն նշում է, որ ենթաժրագրերը, որոնք ներառում են մասնավոր սեփականության ձեռքբերում և/կամ հանգեցնում են զգալի ՀՏ ազդեցության, չեն համապատասխանում ծրագրի ֆինանսավորման պահանջներին և, հետևաբար, պետք է բացառվեն ծրագրից:


16. Աշխատանքային նախագծի յուրաքանչյուր բաժնի համար նախապես ուսումնասիրվել են յուրաքանչյուր համայնքի կադաստրային քարտեզները պարզելու համար, թե արդյոք կան որոշ համընկնումներ մասնավոր կամ օգտագործվող հողերի և առկա ջրատարերի միջև: Կադաստրային քարտեզների ճշգրտում իրականացվել է նաև տեղում՝ հիմք ընդունելով գեոդեզիական հանույթն ու չափագրումները, ըստ անհրաժեշտության: Ստուգելուց հետո աշխատանքային նախագծում ազդեցությունը օրինական/անօրինական օգտագործվող հողերի/կառույցների վրա բացառվել է:

17. Աշխատանքային նախագծում կիրառված հիմնական սկզբունքները.

² ՀՁԿ ՓԲԸ-ի վեբ կայք: <http://www.armwater.am/am/current-activities.html>

- Համայնքների փողոցներում ընտրվել են նոր գծեր, որի միջոցով կկանխարգելվի ՀԶՏ-ն, ինչպես նաև ապագայում համայնքի անդամների կողմից հողերի օգտագործումը: Այն նաև կապահովի ենթակառուցվածքի ավելի հեշտ տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև կկանխարգելի խողովակաշարերի ցանցից ջրի անօրինական օգտագործումը:
- Հողի մասնավոր օգտագործման դեպքում (օրինական կամ անօրինական) տրվել է նոր նախագծային լուծում ազդեցությունները բացառելու նպատակով:

18 Ստորև բերված **Պատկեր 1**-ում ցույց է տրված, թե ինչպես է շրջանցվել բնակելի տարածքների վրա ազդեցությունը թալին քաղաքում: Առկա ջրագիծը անցել է բնակելի տարածքներով և տնամերձ հողակտորներով: Նախագծով նախատեսվել է նշված ջրատարի անջատում, ապամոնտաժում և նոր ջրագծի կառուցում տարածքին կից ասֆալտապատ ճանապարհի երկայնքով:




Պատկեր 1. քաղաք թալին, բնակելի տարածքների վրա ազդեցության նախագծով շրջանցված հատվածը:

Ծանոթություն.






- գոյություն ունեցող ջրագծեր
- նախագծվող ջրագծեր
- x-x- շահագործումից դուրս բերվող ջրագծեր
- Այլ ծրագրով իրականացված ջրագծեր

19 **Պատկեր 2**-ում ցույց է տրված, թե ինչպես է շրջանցվել մասնավոր գյուղատնտեսական հողերի վրա ազդեցությունը Սորիկ գյուղում: Առկա ջրագիծը անցել է մշակելի հողատարածքների միջով: Նախագծով նախատեսվել է շրջանցել հողատարածքները և նոր ջրատար կառուցել ասֆալտապատ ավտոճանապարհի երկայնքով:



Պատկեր 2. գյուղ Սորիկ, մասնավոր գյուղատնտեսական հողերի վրա ազդեցության նախագծով շրջանցված հատվածը:

Ծանոթություն.

-  գոյություն ունեցող ջրագծեր
-  նախագծվող ջրագծեր
-  վերականգնվող ՕԿՁ
-  չգործող ՕԿՁ
-  շահագործումից դուրս բերվող ջրագծեր

20 Այս ծրագրի նախագծերը ներկայացվել են, վերանայվել, համաձայնեցվել և հաստատվել է համայնքի ղեկավարության կողմից: Նախագծերը նաև վերանայվել են և հաստատվել հասարակական կոնուլնալ սպասարկման կազմակերպությունների կողմից, մասնավորապես՝ «ԱրմենՏել» ՓԲԸ, «ՀԱՅՌՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԲԸ, «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ: Համայնքային հողատարածքներում ջրատարների վերատեղադրման դեպքում նախագծով նախատեսվում է, որ փողոցի մայթերի մակերեսը պետք է վերականգնվեն նախկին տեսքի: փոխարինվեն նույն տեսակի մայթերով:

21 Ծրագրի նախագիծը իրականացվել է շահառու ընկերությունների հետ սերտ համագործակցության արդյունքում:

- Ծրագրի մասին հանրային իրազեկումն և նախագծումը հաստատվել է Հանրային խորհրդատվության (ՀԽ) կողմից Տեղական Ինքնակառավարման Սարմինների (ՏԻՍ) ներկայացուցիչների և շահառու համայնքների անդամների հետ միասին, աշխատանքային նախագծի ընթացքում (տես [Աղյուսակ 2](#)):
- Բոլոր նախագծերը ներկայացվել են, քննարկվել և համաձայնեցվել ՏԻՍ-երի հետ: Համաձայնության արդյունքում նախագծերը հաստատվել և կնքվել են ՏԻՍ-երի կողմից:

Աղյուսակ 2: Հանրային իրազեկման արշավի իրականացում Արագածոտնի մարզում

Գ/Գ	Համայնք	Հանդիպման օրը	Ցուրաքանչյուր հանդիպման տևողությունը	Մասնակիցների թվաքանակը	Միայն իգական սեռի մասնակիցների թվաքանակը	Իգական սեռի մասնակիցների %-ը
1	ք. Թալին	05.06.2014թ.	1 ժամ 20 րոպե	35	16	45.7
2	գ. Արևուտ	26.09.2014թ.	30 րոպե 30 րոպե	51	14	27.2
3	գ. Պարտիզակ	27.09.2014թ.	1 ժամ 10 րոպե 40 րոպե	30	21	70.0
4	գ. Նոր Ամանոս	27.09.2014թ.	40 րոպե 40 րոպե	25	13	52.0
5	գ. Քարաբերդ	26.09.2014թ. 23.10.2014	1 ժամ 50 րոպե	44	21	47.7
6	գ. Արուճ	23.10.2014	30 րոպե	18	8	44.4
7	գ. Կանչ	24.10.2014	35 րոպե	10	5	50.0
8	գ. Հակո	24.10.2014	50 րոպե	20	12	60.0
9	գ. Սորիկ	24.10.2014	40 րոպե	16	4	25.0
Ընդամենը				249	114	45.8

4. ՀՁՏ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԱՃԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

22 Ենթաժողովի X-ը չի առաջացնի որևէ մշտական և/կամ ժամանակավոր ազդեցություններ, քանի որ շահագործման և տեխնիկական սպասարկման միջոցառումները հիմնականում իրականացվելու են իրականացվելու է ՀՀԿ-ի սեփականություն հանդիսացող տարածքներում, կամ համայնքին պատկանող հողերում, ինչպես նաև համայնքային ենթակառուցվածքների համար օտարված գոտիներում:

23 Այս ենթաժողովի ազդեցությունը չի տարածվի մասնավոր հողերի կամ համայնքի անդամների կողմից վարձակալված կամ այլ կերպ օգտագործվող համայնքի հողերի վրա: Ջրի խողովակաշարերի շինարարությունը ժամանակավոր ազդեցություն չի թողնի ձեռներեցության վրա, քանի որ ճանապարհները և ճամփեզրերը բավականին լայն են, ինչի շնորհիվ շահառուների համար խոչընդոտներ և բիզնեսի եկամտի կորուստ չի առաջանա:

24 Ջրամատակարարման համակարգի վերակառուցման ընթացքում նախագծային տարածքներում տնային տնտեսությունների և ձեռներեցության վրա ազդեցություն չի ակնկալվում, քանի որ հետևյալ միջոցառումները նախատեսված են նմանատիպ ազդեցությունները (թեկուզև ժամանակավոր և կարճատեև) մեղմացնելու/վերացնելու համար:

- Բոլոր բնակիչներին և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողներին նախապես աշխատանքի բնույթի և ընթացքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, որպեսզի նրանք կարողանան անհրաժեշտ նախապատրաստություններ կատարել,
- Աշխատուժի ավելացում և համապատասխան սարքավորումների տրամադրում աշխատանքները նվազագույն ժամկետում ավարտելու համար, և
- Հին համակարգից տնային տնտեսությունների ու ձեռնարկատիրական հաստատությունների միացումները անջատելուց առաջ ստուգում/ճշգրտում, համոզվելու որ նոր համակարգին միացումը լավ է կատարված:

- 25 Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր է ժամանակավոր մուտքի սահմանափակում կամ դժվարանցանելիության պայմաններ: Հետևյալ կետերը ընդգրկվելու են Կապալառուի պայմանագրի մեջ վերոհիշյալ խնդիրների ազդեցությունը մեղմացնելու կամ չեզոքացնելու համար:
- Նախքան քաղաքաշինական աշխատանքների սկիզբը շինարարության Կապալառուն պետք է երաշխավորի այլընտրանքային լուծում, որը կապահովի համայնքի անդամների մուտքը դեպի իրենց հողային տարածք կամ բնակության վայր,
 - Մուտքի այլընտրանքային լուծման բացակայության դեպքում Կապալառուն պետք է իր աշխատանքները ծրագրի այնպես (ժամային գրաֆիկով, ոչ բանուկ ժամանակամիջոցում, օգտագործելով հատուկ տեխնոլոգիաներ և այլն), որ տեղի բնակիչները ազդեցություն չկրեն: Կապալառուն պետք է նախօրոք տեղեկացնի բոլոր բնակիչներին և առևտրականներին աշխատանքի բնույթի և տևողության մասին, որպեսզի վերջիններս ձեռնարկեն համապատասխան միջոցներ,
 - Սպառողի մուտքը գործող բիզնես պահպանելու համար կապալառուն պետք է ապահովի շարժական անցուղիներ/կամրջակներ և համապատասխան մուտք թե մարդկանց և թե մեքենաների համար խրամուղիների վրայով կամ շրջանցելով դրանք:
 - Նման չկանխատեսված դեպքերում, երբ հողատերը կորցնում է իր բերքը, դեպի հողատարածք մուտք չունենալու պատճառով, Կապալառուն պետք է զեկուցի վերահսկող խորհրդատուին և դադարեցնի քաղաքաշինական աշխատանքները տուժած վայրերում մինչև բերքի կորստի փոխհատուցումը, ինչպես նշված է ՀՀՏՇ դրույթներում:
 - ՀՀԿ ՓԲԸ-ն կվերահսկի շինարարության ազդեցությունը՝ համաձայն նկարագրված ընթացակարգերի և մոտեցումների:

5 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

26 Ենթածրագիր X-ի համար հարկադիր տարաբնակեցման ազդեցությունների ուսումնասիրությունից հետո մշակվել է համալիր հետազոտական հաշվետվություն, վստահ լինելու համար, որ Ենթածրագիրը չի ունենա ՀՀՏ ազդեցություններ: Ե՛վ ժամանակավոր, և՛ մշտական ազդեցությունները քննարկվել և վերլուծության են ենթարկվել ուսումնասիրության ընթացքում:

27 Ենթածրագիր X-ը ընդգրկում է առկա ջրագծերի վերականգնում և բարելավում: Աշխատանքային նախագիծը հաստատում է, որ վերականգնողական և շինարարական աշխատանքները իրականացվելու են ՀՀԿ-ի սեփականություն հանդիսացող կամ ՏԻՄ-երին պատկանող տարածքներում, ինչպես նաև համայնքային ենթակառուցվածքների համար օտարված գոտիներում:

- Միջոցառումները, անկախ սեփականատիրության կարգավիճակից կամ հողի տվյալ պահին օգտագործումից, չեն պահանջում մշտական կամ ժամանակավոր հողերի ձեռքբերում:
- Բիզնեսի վրա որևէ ազդեցություն չի ակնկալվում:
- Չի սահմանափակվի որևէ անձի մուտքը դեպի կառույցներ, բնական ռեսուրսներ կամ սպասարկման տարածքներ:

28 Շինարարության փուլում ՀՀԿ-ն կիրականացնի շինարարական աշխատանքների վերահսկողություն ցանկացած ժամանակավոր և մշտական ազդեցության, ինչպես օրինակ՝ բիզնեսի կամ այլ կենսական աղբյուրների հասանելիության սահմանափակման և այլ առումով: Ցանկացած ազդեցություն, որը կհայտնաբերվի շինարարական աշխատանքների ժամանակ, կփոխհատուցվի ՀՀՏՇ-ի դրույթների հիման վրա: